ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԼՎԻՆԱ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ Ա. ՋԻՎԱՆԻ 12 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ

2025 թվականի հունիսի 17-ին Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիանա Հայրապետյանն Արմավիրի համայնքապետարանի նիստերի դահլիճում անցկացրեց հանրային լսում՝ «Ալվինա բնակելի համալիր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Ա. Ջիվանի 12 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Հանրային լսմանը մասնակցում էին համայնքապետարանի աշխատակիցներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ, ակտիվ երիտասարդներ:

«Ալվինա բնակելի համալիր» ՍՊ ընկերության տնօրենը ներկայացրեց բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի կառուցման նախագիծը, համաձայն որի Արմավիր քաղաքի Ա. Ջիվանի 12 հողամաս հասցեում նախատեսվում է կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր՝ բաղկացած 4 սեկցիաներից՝ «Ա» - 16 հարկայնությամբ, «Բ» - 1 հարկայնությամբ, «Գ» - 16 հարկայնությամբ, «Դ» - 16 հարկայնությամբ: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի տիպարային հարկում նախագծված են 1-4 սենյականոց բնակարաններ:
Բնակելի համալիրի տարածքում նախագծով նախատեսված են տնկիների տեղադրում, բարեկարգում և կանաչապատում:

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի նախագծի վերաբերյալ մասնակիցների կողմից բարձրացվեցին մի շարք հարցեր՝ կապված բնակելի համալիրի կառուցման ժամկետների, բնակարանների ձեռքբերման պայմանագրերի, հաշմանդամություն ունեցող անձանց հետ կապված մատչելիության, շրջակա միջավայրի վրա ազդեցության և շինարարությանը վերաբերող այլ հարցեր:

Նախագիծը ներկայացնող մասնագետների կողմից, ըստ հարցերի, տրվեցին համապատասխան պատասխաններ:

Հանրային քննարկման մասնակիցները գոհունակությամբ ընդունեցին Արմավիր համայնքում ժամանակակից լուծումներով բնակելի համալիրի կառուցման նախագծին, որը կնպաստի բազմաթիվ բնակիչների բնակարանային կարիքների բավարարմանը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Լ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Արձանագրող Ն. Խաչատրյան

17.06.2025թ.